

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ազգային ակադեմիայի փիլիսոփայության և
իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

**ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՀԻՄՔԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ**

Սույն հոդվածում հեղինակը վերլուծության է ենթարկում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված պահանջները, վերհանելով անձին կալանավորման եղանակով ազատությունից զրկելու հիմքերն ու պայմանները: Միաժամանակ, համադրություն է անցկացվում խնդրի կարգավորման ՀՀ օրենսդրության դրույթների միջև, որի արդյունքում հեղինակի կողմից առաջարկվում են ներպետական դատարանների հայեցողության սահմանների ընդլայնման նկատառումներից ելնելով օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն:

Հիմնաբառեր- Կոնվենցիա, խափանման միջոց, ձերբակալություն, նախադեպային իրավունք, պետության հայեցողություն:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի տեքստում հստակ նշված է, որ իրավախախտման մեջ կասկածվող անձանց ազատությունից զրկումը կարող է իրականացվել տվյալ իրավախախտման կատարումից առաջ և հետո, որը հիմք է հանդիսանում այդ միջոցի կիրառման համար: Սակայն, ինչպես երևում է Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի գործով վճռից, իրավախախտումը՝ որպես հիմք որևէ մեկին ազատությունից զրկելու համար, փաստացի պետք է նախատեսված լինի ներպետական իրավունքով: Դա չի նշանակում, թե պարտադիր պետք է պարզել, որ իրավախախտում իրականում կատարվե՞լ է, սակայն ենթադրությունն առ այն, որ ազատագրկյան հանգեցնող գործողությունները համընկնում են օրենքով նախատեսված որևէ իրավախախտման հետ, պարտադիր է: Դրան զուգահեռ կան նաև երկու այլ անհրաժեշտ պայմաններ: Առաջին՝ իրավախախտում կատարելու համար կասկածվող անձին ձերբակալել, որպեսզի նա կանգնի «իրավասու դատարանի առջև», երկրորդ՝ իրավախախտման կատարման վերաբերյալ կասկածները պետք է հիմնավորված լինեն: Պետք է ապահովել նաև, որ յուրաքանչյուր ազատագրկյան առավելագույն ժամկետը՝ մինչև դատաքննության սկսելը, համապատասխանի իրավախախտման բնույթին և մինչև դատաքննությունը նախատեսվի կալանքից ազատ արձակելու հնարավորություն:

Առաջին պայմանի հետ կապված, չնայած կատարված իրավախախտման վերաբերյալ կասկածը, իրավախախտման կատարումը կանխելու անհրաժեշտությունը կամ կատարված իրավախախտման մեջ կասկածվող անձի հնարավոր թաքնվելն ազատությունից զրկելու հիմքեր են հանդիսանում, այդ միջոցը կհամապատասխանի 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետին միայն այն դեպքում, եթե այն կիրառվի այդ անձի նկատմամբ քրեական գործ հարու-

ցելու նպատակով: Դա է սահմանում 5-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի և 5-րդ հոդվածի 3-րդ կետի փոխկապակցվածությունը: Առաջին դրույթը թույլատրում է ազատությունից զրկումը, իսկ վերջինը՝ պահանջում է, որ այդ հիմքերի օգտագործման դեպքերում ազատությունից զրկված անձը ներկայացվի դատավորին կամ այլ պաշտոնատար անձի, ով օրենքով լիազորված է իրականացնել դատական իշխանություն և խելամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատավարությունն սկսելն ազատելու իրավունք ունի: Դատավորը կամ այլ պաշտոնատար անձը 5-րդ հոդվածի 3-րդ կետի իրավասու դատական մարմին տերմինի բացատրությունն է՝ օգտագործված 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում: Ենթադրվում է, որ այդ անձի առջև ներկայանալը դատավարության միայն առաջին փուլերից մեկն է, որն արդյունքում կհասնի դատաքննության, դրանով իսկ նշելով, որ ազատությունից զրկելու նպատակը քրեական դատավարության իրականացման ապահովումն է:

Սակայն, որպեսզի ազատագրկումը համընկնի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին, դրան պետք է հետևի քրեական գործի վարույթը՝ լինի դատաքննություն, թե՛ մեղադրանքի առաջադրում: Վճռական նշանակություն ունի ազատությունից զրկելու պահին հետապնդվող նպատակը, իսկ թե արդյունքում այն կհանգի դրան, թե՛ ոչ, էական նշանակություն չունի:

Այսպես, Բրուզանն ընդդեմ Միացյալ Թագավորության¹ և Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության² գործերով վճիռներում Դատարանը 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի խախտում չի արձանագրել այն հիմքով, որ ազատագրված անձինք ազատվել են կալանքից, սակայն նրանցից ոչ ոքի մեղադրանք չի առաջադրվել, ոչ ոք չի կանգնել իրավասու դատարանի առջև: Դատարանը վճռել է,

www.journal.lawinstitute.am

որ իշխանություններն այդ անձանց հարցաքննելուց հետո պարզել են, որ նրանց նկատմամբ կասկածանքներն անհիմն են, և նման իրավիճակում մեղադրանք չէին կարող առաջադրել: Նման արդյունքն, այնուամենայնիվ, չէր նշանակում, որ քրեական հետապնդման անհրաժեշտությունը կասկածի տակ էր առնվում, քանի որ այդ հարցը կարող էր որոշվել ազատագրված անձանց հարցաքննելուց հետո:

5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի նպատակների համար անթույլատրելի է անձին գրկել ազատությունից՝ հիմնվելով միայն քրեական օրենքի դրույթի վրա, եթե ի սկզբանե մտադրություն չի եղել այդ օրենքը կիրառել ընդդեմ տվյալ անձի՝ մինչև դրա անհրաժեշտությունը: Անձին ազատությունից գրկելը, այնուհետև դատարանին ներկայացնելն այն դեպքերում, երբ նրա նկատմամբ քրեական գործ հարուցելու նպատակ չի հետապնդում, հակասում է 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին, ինչպես դա սահմանվեց Չուիլան ընդդեմ Իտալիայի գործով:

Անձը կազմակերպված հանցավոր գործունեության համար կալանավորվել և ներկայացվել էր դատարան՝ հարկադիր պահման օրդեր ստանալու համար: Նման վարքագիծը, անկասկած, կարող էր տարբեր իրավախախտումների պատճառ հանդիսանալ, սակայն օրդերի համար դիմումն ու դրա հանձնումը և բուն պատճառը, որի համար սկսվել էր վարույթը, հիմնվում էին չապացուցված կասկածների վրա. օրդեր տալու պատճառ են դարձել անցյալում դիմողի կատարած իրավախախտումները և այն, որ վերջինս հավանական վտանգ էր ներկայացնում հասարակության համար, այլ ոչ թե նրա մասնակցությունը կոնկրետ իրավախախտմանը: Այդպիսով, դիմողի ազատագրումն ավելի շուտ կանխիչ միջոց էր և չէր կարող հավասարագոր լինել դատարանի կողմից կալանավորելուն, քրեական դատավարության բաղադրատարր չէր կազմում: Այս գործում ազատագրումը նույնպես հակասում էր 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին, քանի որ հնարավոր չէր ապացուցել, թե հարկադիր պահման օրդեր ստանալու համար ազատագրումն իրականացվել է այն հիմքով, երբ կան բավարար հիմքեր ենթադրելու, որ անհրաժեշտ է կանխել իրավախախտման կատարումը: Բանն այն է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված լիազորությունների կիրառման թույլատրելիությունը՝ իրավախախտումը կանխելու նպատակով, կապված է քրեական օրենսդրության կենսագործման հետ, և դրանց կիրառումը պետք է ուղղված լինի կոնկրետ և որոշակի իրավախախտումների կանխմանը:

Պարզ է, որ այդ նպատակի համար անհրաժեշտ է, որպեսզի այս կամ այն անձի կողմից ակնկալվող գործողություններն ունենան ինչ-որ աստիճանի որոշակիություն, իսկ նրանց կողմից կատարվելիք գործողությունները պետք է անխուսափելի լինեն: Չուիլան ընդդեմ Իտալիայի գործով վճիռը կրկին հաստատում է, որ ըստ 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ»

ենթակետի ազատությունից գրկումը՝ որպես կանխիչ միջոց, կարող է արդարացվել այն դեպքում, եթե այն ուղղված է կոնկրետ և որոշակի իրավախախտումների կանխմանը:

Ձեռնարկում ընդդեմ Լիտվայի գործում այն վերաբերում է սպանության մեջ կասկածվող դիմողին, որի նկատմամբ քննությունը դադարեցվել էր ապացույցների անբավարարության պատճառով: Ավելի ուշ նա ձերբակալվել էր քրեադատավարական օրենսգրքի նորմերից մեկի հիման վրա՝ կապված հանցավոր աշխարհին պատկանելու և այլ անձանց նկատմամբ կատարված ահաբեկչության հետ, որը թույլատրում էր ձերբակալում կանխիչ նպատակով: Գործելով այդ նորմի հիման վրա՝ գլխավոր դատախազի տեղակալը 60-օրյա ձերբակալման թույլտվություն էր տվել, իսկ դատարանը մերժել էր այդ որոշման բողոքարկումը: Դիմողին կոնկրետ որևէ մեղադրանք չէր առաջադրվել, և այդ կանխիչ կալանավորման հետ կապված որևէ քննություն չէր կատարվել: Ձերբակալության թույլտվություն տալուց մեկ ամիս անց հայցվորին սպանության մեղադրանք էր առաջադրվել, ինչն էլ հիմք էր հանդիսացել կալանքի տակ պահելու համար: Եվրադատարանն առանց վարանելու վճռել է, որ նախնական կանխիչ կալանավորումը եղել է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ այն որևէ կապ չի ունեցել քրեական գործի ընթացքի հետ:

Այնուամենայնիվ, 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթները չեն պահանջում, որ ազատության գրկման նպատակը լինի միայն քրեական գործի հարուցումը: Իրավական դաշտն այնպիսին պետք է լինի, որ ազատ չարձակված անձի ներկայացումն իրավասու դատարան՝ նման միջոցի ինքնաբերաբար հետևանք հանդիսանա: Իրավասու դատական մարմնի գործառնություններից է որոշել նախնական կալանքի ժամկետի երկարաձգման անհրաժեշտությունը, և եթե կա նման անհրաժեշտություն, ապա՝ որքա՞ն ժամանակով: Հաջորդ բաժիններում կքննարկվեն ժամկետի երկարաձգման հիմքերը և դրա առավելագույն չափը: Սակայն կարևոր է, որ այդ գործընթացը լինի իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձանց ազատությունից գրկելու միջոցի անբաժանելի մաս: Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործում իրավասու դատական մարմնի կողմից հսկողություն չէր իրականացվել ազատագրված զինվորների նկատմամբ այն պատճառով, որ նրանց կատարած իրավախախտումները որակվել են որպես կարգապահական: Արդյունքում, իշխանությունները չկարողացան հիմնավորել ազատությունից այդ գրկումը: Եվրադատարանն արձանագրել է 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Երկրորդ կարևոր նախապայմանը հիմնավոր կասկածի առկայությունն է: 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում սահմանված է, որ անձին ազատությունից գրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված կասկած առ այն, որ նա իրավախախտում է

կատարել, միայն այդ դեպքում է ազատությունից զրկումը համարվում հիմնավորված և օրինական: Յուրաքանչյուր կասկած պետք է լինի ողջամիտ (Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում նշվել է, որ արժանահավատությունն ու bona fides կասկածները հանդիսանում են հիմնավորվածության կարևոր տարրերից)¹⁰: Սակայն կասկածը հիմնավորված կհամարվի միայն ենթադրվող հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող հիմնավոր փաստերի ու տեղեկությունների առկայության դեպքում: Այսինքն պետք է լինեն ապացույցներ, որ կասկածվող անձի կատարած գործողություններն ուղղակիորեն մատնանշում են նրա առնչությունն իրավախախտմանը, կամ փաստաթղթերով, կամ դատաբժշկական փորձաքննության արդյունքներով հաստատված նմանօրինակ այլ ապացույցներ: Այսպիսով, ազատությունից զրկումը չպետք է հիմնվի զգացմունքների, բնազդների, ուղղակի տպավորության և նախապաշարմունքների (էթնիկական, կրոնական կամ որևէ այլ) վրա, անկախ նրանից, թե դրանք որքան հիմնավոր կարող են արտահայտել այս կամ այն անձի առնչությունը կատարված իրավախախտմանը: Դա չի նշանակում, որ պետք է բավարար ապացույցներ ունենալ՝ հիմնավորելու դատապարտումը կամ նույնիսկ մեղադրանքի առաջադրումը: Ինչպես վերը նշվեց, Դատարանը Բրուուզանն ընդդեմ Միացյալ Թագավորության և Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով վճիռներում արձանագրել է, որ կալանավորման ժամանակ հարցաքննության նպատակը, համաձայն 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի, համարվում է քննության ընթացքի հետագա շարունակությունը՝ կասկածի հաստատման կամ հերքման նպատակով, որն այս փուլում, անկասկած, չի կարող համոզիչ լինել: Բայց և այնպես, կասկածը պետք է ունենա որևէ հիմնավորում¹¹:

Դատարանը Ֆոկսը, Էնթբելն ու Խարտլին ընդդեմ Միացյալ Թագավորության¹² գործով վճռում պարզաբանել է, որ հիմնավորված կասկածը չի կարող հիմնվել սոսկ այն հանգամանքի վրա, որ անձն անցյալում կատարել է որևէ իրավախախտում (նույնիսկ՝ նմանօրինակ, համանման): Ըստ այդ գործի, դիմողներն անցյալում դատապարտվել են ահաբեկչական գործողություններ կատարելու համար, և չնայած Դատարանը համաձայնել է, որ բխելով այլ փաստերից՝ դա կարող է ուժեղացնել կասկածները, սակայն չի կարող հանդիսանալ նրանց ազատությունից զրկելու միակ հիմքը: Անհրաժեշտ է, որ կասկածը կապված լինի կասկածյալի ներկա վարքագծի հետ, և ոչ թե միայն այն հավաստման, որ կա ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն:

Հիմնավորված կասկածի առկայություն է արձանագրվել Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի գործով վճռում, որի պարագայում բնակտարածության վարձակալները ձերբակալվել են վարձավճարի հետ կապված խարդախության համար: Բնակտարածու-

թյան տիրուհին ոստիկանությանը հայտնել է, որ կասկածում է վարձակալներին իրենց պարտավորությունները չկատարելու մտադրության մեջ, և քննությունը բացահայտել է, որ նրանց նշած հասցեն սոսկ փոստարկղի համար է և որ նրանցից մեկի նկատմամբ խարդախության համար քրեական հետապնդում է հարուցված: Պունցելտն ընդդեմ Չեխիայի գործով վճռում Դատարանը բացահայտել է հիմնավորված կասկածի առկայություն՝ ելնելով նրանից, որ երկու հանրախանութների վաճառողը չի կարողացել իրացնել բանակցությունների ընթացքում որպես երաշխիք ներկայացված երկու չեկը, քանի որ դրանք ապահովված չեն եղել:

Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի գործով վճռում Դատարանը ընդգծել է, որ չեն ներկայացվել փաստեր կամ տեղեկություններ, առ այն, որ դիմողը փորձել է իր կամ որևէ մեկի համար օգուտ ստանալ այլ երկրներին տրամադրած պետական միջոցներից¹³: Ինչ-ինչ «գործարքների» անհասկանալի վկայակոչումը, Հանձնաժողովի կարծիքով, չեն հաստատել նման մտադրությունը: Սակայն Լուկանովի գործում գլխավոր խնդիրն այն էր, որ հայցվորին ներկայացված մեղադրանքներից շատերն, ըստ բուլղարական օրենսդրության իրավախախտում չէին համարվում:

Անհրաժեշտ է ոչ միայն ցույց տալ կապը ազատությունից զրկված անձի և դեպքերի միջև, որոնք ենթադրաբար իրավախախտում են համարվում, այլ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ այդ դեպքերը, իրադարձությունները համընկնում են այն իրավախախտմանը, որի կատարման մեջ նրան կասկածում են: Դա խնդիրներ կառաջացնի նոր կամ հազվադեպ կատարվող իրավախախտումների ժամանակ, երբ առանձին արգելքի անսովոր մեկնաբանումը կարող է հանգեցնել կասկածի անհիմն համարելուն:

Չնայած հիմնավոր կասկածի առկայության ստուգումը չի նախատեսվում հավանական իրավախախտումների նկատմամբ, պահանջը, որ այդ հիմքով ազատությունից զրկումը պետք է իրականացվի միայն առանձին և կոնկրետ իրավախախտումների դեպքում, ինչպես նաև այն, որ այդ ազատությունից զրկումը՝ կանխարգելման նպատակով, պետք է համարվի «հիմնավորված անհրաժեշտություն», անկասկած, կնշանակի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի խախտումից խուսափելու համար, պետք է ցույց տալ, որ տվյալ կասկածը նույնքան հիմնավոր է: Ուստի պետք է լինեն բավարար, օբյեկտիվ ապացույցներ, որ դիտարկվող անձի գործողությունները մեծամասամբ ուղղված են իրավախախտում կատարելուն: Ընդ որում, չպետք է հիմնվել նախապաշարմունքների կամ անհիմն կասկածների վրա:

Կալանավորման հիմքերը և պայմանները ՀՀ քր. դատ. օր-ով առանձին սահմանված չեն: Դրանք ներառվում են ընդհանուր խափանման միջոցների կիրառման հիմքերի և պայմանների մեջ ՀՀ քր. դատ. օր. 135-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում: Բացա-

ուրություն է կազմում նշված հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոցը մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել միայն այնպիսի հանցագործության պարագայում, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, կամ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողությունները: Նորմի ամբողջական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ որոշակի պայմաններում կալանավորումը կարող է կիրառվել նաև այնպիսի հանցագործության նկատմամբ, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց պակաս է: Ստացվում է, որ երաշխիքային նորմը ձեռք է բերում դեկլարատիվ բնույթ, թեև չի կարելի միանշանակ ժխտել նաև այն հանգամանքը, որ այդպիսի հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը չի կատարի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողություններից որևէ մեկը:

Մոտեցումը պայմանավորված է նրանով, որ օրենսդիրը կալանավորման կիրառման հիմքում չի դրել հանցագործության ծանրության աստիճանը՝ թեև ՀՀ քր. դատ. օր-ի 442-րդ հոդվածը սահմանում է, որ. «Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում»: Իսկ կալանավորման կիրառման համար 135-րդ հոդվածով սահմանված ընդհանուրից բացի մասնավոր հիմքեր չեն նախատեսվում: Այս առումով նպատակահարմար է ՀՀ քր. դատ. Օրենսգրքում, սակայն ոչ թե խափանման միջոցների կիրառման հիմքերը նախատեսող, այլ կալանավորման կիրառումը կանոնակարգող հոդվածում, սահմանել, որ խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման անհնարինու-

թյան դեպքում կալանավորումը կարող է կիրառվել միայն միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ: Այս իմաստով մոտեցումը արդարացված չէ այն առումով, որ հստակ և սպառիչ սահմանված չեն կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրելու հստակ պահանջները: Նման կարգավորումը ըստ էության սահմանափակում է պետության հայեցողությունը, նկատի ունենալով, որ... գործը, որտեղ հստակ սահմանված է, որ կալանավորումը կիրառելի է այն դեպքերում, երբ ավելի մեղմ միջոցները կիրառելի չեն և չեն կարող ապահովել կանխատեսվող արդյունքը: Իսկ այն դեպքերում, երբ կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրելու համար սահմանված լինեն առանձին պայմաններ, ներպետական իրավակիրառ մարմինը ըստ էության կունենա հայեցողության ավելի լայն սահմաններ՝ նկատի ունենալով երկու կարևոր հանգամանք. առաջին, Կոնվենցիան ըստ էության կարգավորում է ազատության սահմանափակման հետ կապված խափանման միջոցի կիրառման պայմանները՝ Կոնվենցիայով սահմանված իմաստով: Իսկ օրինակ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը, որը, ինչպես ցույց տվեց նախադեպային իրավունքի վերլուծությունը, ըստ էության դուրս է մնում Կոնվենցիոն կարգավորման տեսադաշտից, թեև, իրենց բնույթով որոշակիորեն սահմանափակում են եթե ոչ անձի ազատության, ապա, առնվազն՝ ազատ տեսողաշարժվելու իրավունքը: Երկրորդ, կալանավորման հիմքերի առանձին սահմանումը առավել հստակ և կանխատեսելի կդարձնի այդ խափանման միջոցի կիրառման հնարավորությունը ոչ միայն անձի, այլև՝ իրավակիրառ մարմնի համար, ինչը մարդու իրավունքների առավել պաշտպանվածության կարևոր երաշխիք է:

¹ Տե՛ս, Brougan v. United Kingdom,
² Տե՛ս, Muerci v. United Kingdom, 29 November 1989թ.:
³ Այս գործերում քրեական հետաքննության հաջողությունը կախված կլինեք կասկածյալների արած հայտարարություններից, սակայն քանի որ նրանք հրաժարվել են պատասխանել հարցերին, իմաստ չունեն նրանց դեմ մեղադրանք առաջադրել:
⁴ Կալանավորման լիազորությունների կիրառումն այն դեպքերում, երբ չկա նման մտադրություն, ոչ միայն դուրս է գալիս հոդվ. 5-ի 1-ին կետի «c» ենթակետի սահմաններից, այլ նաև հակասում է կամայականության ընդհանուր արգելքի-ն:
⁵ Տե՛ս, Չուիլան ընդդեմ Իտալիայի 22 փետրվարի 1989թ.:
⁶ Այս պահանջի էությունն այն է, որ ազատագրկումն արդարացնող գործողությունները, ամենայն հավանականությամբ, իրավախախտում կատարելու փորձ կլինեն, որը մեծամասամբ համարվում է իրավախախտում:
⁷ Տե՛ս, Չուիլան ընդդեմ Իտալիայի:
⁸ Տե՛ս, Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի:

⁹ Տե՛ս, Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների

¹⁰ Տե՛ս, Muerei v. United Kindgom, 29 November 1989թ.:

¹¹ Տե՛ս, Case of Brogan and others v. United Kindgom (Application no. 11209/84; 11234/84; 11266/84; 11386/85) (see Yearbook of the Convention, vol. 14, p. 32 [1971], vol. 16, pp. 26-28 [1973], vol. 18, p. 18 [1975], and vol. 21, p. 22 [1978], for communications giving notice of derogation, and Information Bulletin on Legal Activities within the Council of Europe and in Member States, vol. 21, p. 2 [July, 1985], for the withdrawal)

¹² Տե՛ս, Case of Fox, Campbell and Hartley v. The United Kindgom (Application no. 12244/86; 12245/86; 12383/86) (see, mutatis mutandis, the Klass and Others judgment of 6 September 1978, Series A no. 28, pp. 27 and 30-31, §§ 58 and 68):

¹³ Տե՛ս, Lukanov v. Bulgaria, 26 April 2000թ.:

Օգտագործված գրականության ցանկ

1. Brogan v. United Kindgom,
2. Muerei v. United Kindgom, 29 November 1989թ.:
3. Չուիլան ընդդեմ Իսպաիայի 22 փետրվարի 1989թ.:
4. Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի
5. Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների
6. Case of Brogan and others v. United Kindgom (Application no. 11209/84; 11234/84; 11266/84; 11386/85) (see Yearbook of the Convention, vol. 14, p. 32 [1971], vol. 16, pp. 26-28 [1973], vol. 18, p. 18 [1975], and vol. 21, p. 22 [1978], for communications giving notice of derogation, and Information Bulletin on Legal Activities within the Council of Europe and in Member States, vol. 21, p. 2 [July, 1985], for the withdrawal).
7. Case of Fox, Campbell and Hartley v. The United Kindgom (Application no. 12244/86; 12245/86; 12383/86) (see, mutatis mutandis, the Klass and Others judgment of 6 September 1978, Series A no. 28, pp. 27 and 30-31, §§58 and 68).
8. Lukanov v. Bulgaria, 26 April 2000թ.:

Գեւորգ Կոստանյան

Кандидат юридических наук, доцент.

Докторант института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

Соответствие отрегулированных законодательных положений РА конвенционным основаниям для задержания.

В этой статье автор анализирует требования, изложенные в пункте 1 (с) статьи 5 Конвенции, путем обсуждения оснований и условий лишения лица свободы в форме содержания под стражей. В тоже время анализируются соответствующие положения законодательства РА по данному вопросу, в связи с чем автор предлагает необходимость внесения изменений в законодательство, принимая во внимание расширение пределов усмотрения национальных судов.

Ключевые слова: Конвенция, мера пресечения, арест, прецедентное право, дискреционное право государства.

Gevorg Kostanyan

PHD in Law, Associate professor.

Doctoral at the Philosophy, Sociology and Law Institute
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

Conformity of conventional grounds for detention with RA legislative regulations

In this article, the author analyzes the requirements laid down in Article 5 § 1 (c) of the Convention by discussing the grounds and conditions for depriving a person of freedom in the form of detention on remand. At the same time, the relevant provisions of the RA legislation on the issue are analyzed, as a result of which the author proposes the necessity of legislative changes, taking into consideration the expansion of the margin of appreciation of the domestic courts.

Keywords: Convention, restraint, imprisonment, case law, discretion of the state.